

«Երիտասարդությունը մարտահրավեր ընդունելու քաջությունն է, այլ ոչ թե դրանից խույս տալը»:

Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց



Ս.թ. փետրվարի 22-ին ԳՀՃ տեսուչ հոգձ. Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը՝ ուղեկցությամբ ԳՀՃ Աստվածաբանության ամբիոնի աշխատակից ԲՐԶ. Հարություն սրկ. Տեր-Ասատրյանի հետ մասնակցեց Ճեմարանի դասախոս Բ.Գ.Թ. Նորայր Պողոսյանի «Գրիգոր Շղթայակիր Պատրիարք» վերնագրով գրքի շնորհանդեսին:

Հիշյալ գրքի հրատարակությունը մեծապես շահեկան է երանաշնորհ պատրիարքի գործունեության ներկայացման և ԺԸ դարի Երուսաղեմի հայկական պատրիարքության բազմաթիվ հետաքրքրական անցքերի համակողմանի ուսումնասիրության և վերհանման առումով: Գրքի գինեձոնին իրենց գեղեցիկ կատարումներով ներկայացան նաև ԳՀՃ սաները:



Սրբոց Վարդանանց



Ամեն տարի ձևավորված գեղեցիկ ավանդույթի համաձայն՝ Ճեմարանականները և հանրապետության մի քանի բուհերի ուսանողներ ի մի են հավաքվում Մայր Աթոռ Սուրբ

Էջմիածնում՝ նշելու ազգային և եկեղեցական կարևորագույն տոներից մեկը՝ Սրբոց Վարդանանց հիշատակի օրը: Ս. թ. փետրվարի 23-ին ԳՀՃ հանդիսությունների սրահում տեղի ունեցավ Վարդանանց տոնին նվիրված հանդիսավոր միջոցառում՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի: Միջոցառումը բացվեց ԳՀՃ տեսուչ հոգեշնորհ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանի ողջույնի խոսքով: Այնուհետև ներկաներին ողջունեց ԵՊՀ ռեկտոր տիար Արամ Միմոնյանը: Միջոցառման շարունակության մեջ ԳՀՃ երգչախմբերը Երևանի մայր բուհի և Հ. Հ. Կառավարման պետական ակադեմիայի սաների հետ ներկայացան տոնական գեղարվեստական հայտագրով: Հանդիսականներին «Մի նոր հայացք Եղիշեի երկասիրության վրա» խորագրով դասախոսություն ներկայացրեց ԵՊՀ դասախոս պ.գ.դ. Ալբերտ Ստեփանյանը: Միջոցառումն ավարտվեց Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով ու աղոթքներով:



Ճեմարանի «Էջմիածին» երգչախմբի յոթնօրյա ճամփորդությունը

Փետրվարի 5-ին Գևորգյան հոգևոր ճեմարանի «Էջմիածին» երգչախումբը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի օրհնությամբ և ԳՀՃ տեսուչ հոգեշնորհ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանի գլխավորությամբ մեկնեց Մոսկվայի և Նոր Նախիջևանի հայոց թեմ, որտեղ հանդիպեց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս արք. Ներսիսյանին: Նույն օրը երեկոյան տղաները համերգ ունեցան՝ նվիրված Ռուսահայոց թեմի հիմնադրման 300 ամյակին: Հաջորդ օրը տղաները մեկնեցին Զագորսկ, որտեղ եղան Մոսկվայի հոգևոր ակադեմիայում, ծանոթացան ակադեմիայի աշխատակիցներին, ուսանողներին, ուսանողական կյանքին և շրջափակին: Մոսկվայում գտնվելու երրորդ օրը ճեմարանցիներն անցկացրին ծանոթանալով քաղաքի դիտարժան վայրերին, իսկ նույն օրը երեկոյան հանդիպեցին Մոսկվայի հայ երիտասարդների հետ: Հաջորդ օրը լուսադեմին ուղևորվեցին Մինսկ, որտեղ պետք է մասնակցեին միջազգային փառատոնին: Այդ օրը երեկոյան երգչախմբի սաները հանդիպեցին համայն Բելառուսիո մետրոպոլիտին, ում փոխանցեցին Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի նվերներն ու ողջույները: Ճանապարհորդության հինգերորդ օրը լի էր տարբեր միջոցառումներով. նախ՝ այդ օրը առավոտյան ԳՀՃ տեսուչ Հոգեշնորհ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը և երգչախմբի ղեկավար բրշ. Արթուր սրկ. Վարդանյանը հարցազրույց տվեցին ռադիոյով, իսկ երեկոյան շրջայցից հետո Գրողնոյի թեմի Սուրբ Պոկրովսկի Մայր տաճարում տեղի ունեցավ երգչախմբի համերգը: Փետրվարի 10-ին երգչախումբը բարեհաջող հանդես եկավ մրցույթի շրջանակներում: Ճանապարհորդության յոթներորդ օրը՝ նախքան գալահամերգին մասնակցելը, ճեմարանականները Տեր Վյաչեսլավ ավագ քահանայի հետ մասնակցեցին Գրողնոյի համայնքային եկեղեցիներից մեկում մատուցված Սբ. Պատարագին: Գալահամերգը տեղի ունեցավ նույն օրը երեկոյան: «Էջմիածին» երգչախումբը զբաղեցրեց պատվավոր երկրորդ տեղը: Լուսադեմին հրաժեշտ տալով Գրողնոյում ձեռք բերած ընկերներին՝ տղաները վերադարձան տուն՝ հարազատ Էջմիածին:





Սուրբ Սարգիսը՝ բարեխոս

Երիտասարդ սիրահարների, նորապսակների և արդեն կազմավորված ընտանիքների բարեխոսը՝ ամենահաս և արագահաս սբ. Սարգիսը, մեր ժողովրդի ամենասիրված սուրբերից է, ում հիշատակը տոնվում է Առաջավորաց պահեփին հաջորդող շաբաթ օրը: Ուրբաթ երեկոյան տան տիկիները պատրաստել են առանց խմորի աղի բլիթներ (որոշ տեղերում այդ բլիթները պատրաստել են փոխինդի և խաղողի դոշաբի շաղախից, որի վրա խաչաձև նշան են արել), տվել դրանք տան երիտասարդներին, ովքեր կամ նոր պետք է ճանաչեին իրենց ապագա կողակիցներին, կամ արդեն պատրաստվում էին ամուսնանալ: Վերջիններս քնելուց առաջ ուտում էին աղի բլիթը և հայցում սբ. Սարգիս բարեխոսությունը, որպեսզի երագում տեսնեն իրենց ապագա փեսացուին կամ հարսնացուին. «Ճեպընթաց արշաւամբ ելէք յերկինս, // Գոչմամբ Սուրբ Սարգիս և Սարտիւրոս, // Աղաչեցէք միշտ զՔրիստոս»: Հատկապես աղջիկները փափագում էին տեսնել իրենց փեսացուներին, որոնք երագի մեջ պետք է ջուր տային իրենց, և ում ձեռքից որ իրենք ջուր առնեին՝ նա էլ պետք է լիներ ապագա փեսացուն: Նույն կերպ, եթե տղայի տված ջրամանը ոսկուց էր լինում, ապա նա հարուստ պետք է լիներ, եթե արծաթից՝ միջին հարստության տեր, իսկ եթե պղնձից կամ կավից՝ փեսան լինելու էր աղքատ: Կերած բլիթի մյուս կեսը դնում էին բարձի տակ, իսկ հաջորդ առավոտյան հանում էին ու դնում տանիքի վրա, ապա սպասում, որ թռչունը գա և տանի բլիթը, իսկ թռչելու ուղղությունից հասկանում էին, թե ինչ բախտ կունենա ապագա հարսը: Եթե թռչունը տեղում կտցահարում էր, հավատում էին, որ աղջկան վիճակված էր չամուսնանալ: Սովորություն կար պատրաստված փոխինդը երեկոյան դնել պատուհանագոգին՝ հուսալով, որ սբ. Սարգիսն իր ձիով այցելության կգա, և փոխինդի վրա ձին պայտի նշան կդնի, որը կխորհրդանշի բախտավորություն և երջանկություն:

Պատմում են մի ավանդություն, որ երբ Սարգիս գորավարը բյուզանդական Հուլիանոս Ուրացող կայսեր հետ կովի մեջ էր, յոթ օր ու յոթ գիշեր սոված է մնում և միտք է անում, թե որտեղից մի կտոր հաց գտնի: Եվ ահա, հեռավոր մի տեղից քամին իր հետ բերում է ցորենի մի քանի հասկեր և լցնում նրա առաջ: Սարգիսը՝ վերցնելով հասկերը, փառք է տալիս Աստծուն, ձեռքի մեջ տրորում և ուտում: Սրանից հետո խնդրում է

Աստծուն, որ ով տարվա մեջ յոթն անգամ հասկերի հիշատակի համար պահք պահի, ինչ որ խնդրի կատարվի նրա համար:

Գարեգին եպս. Սրվանձտյանցը մեր ժողովրդի իրականության մեջ հանդիպած մեկ այլ տոնակատարության մասին է պատմում. կանայք և աղջիկները երկուշաբթի օրվանից սկսած պահք են պահել (ոմանք՝ անսվաղ, այսինքն՝ կերել են միայն հաց ու ջուր) և այդ հինգ օրերն անցկացրել աղոթքներով և ծնրադրություններով: Տան մեծ տիկինը, ով լավ ճանաչել է բոլորին, ուրբաթ օրվա գիշերը քաղցրով փոխինդ է շաղախել, աղջիկներն այն դրել են տան բարձր պատուհանին, իսկ մեծ տիկինը, եթե գոհ է եղել նրանց պահքից, փոխինդի վրա պայտ է դրոշմել: Առավոտյան տեսնելով պայտի նշանը՝ նրանք համարում էին, որ իրենց պահքը ընդունելի է եղել, և իրենց երագանքը կկատարվի, իսկ երբ պայտի նշանը չլիներ, իրենց պահքը ընդունելի չէր համարվի:

Ժամանակի ընթացքում այս տեսակ շատ սովորություններ են տեղ գտել ազգային մեր իրականության մեջ, բայց և այնպես՝ աղի բլիթ ուտելով ապագան իմանալու մեր ցանկության փոխարեն, այսօր մեր ուշադրությունն առավելաբար պետք է ուղղվի սբ. Սարգիս բարեխոսությունը խնդրելուն, որպեսզի Տերը խնամի և առաջնորդի մեզ անձնական և ընկերային կյանքում, օգնի մեզ ճանաչելու Իր կամքը և առաջնորդվելու դրանով, քանի որ ինչպես Սիրաքն է ասում. «Ով հավատում է երագներին, նա նման է մեկին, որը փորձում է բռնել ստվերը և վազել քամու հետևից: Մի՛ տուր քո սիրտը դրանց, քանզի շատերին մոլորեցրին երագները, և դրանց վրա հույս դնողները խտորովեցին» (31:2,7), իսկ սաղմուսերգուն ասում է. «Երանի բոլոր նրանց, ովքեր հույսը դրել են Տիրոջ վրա» (Մաղմ. 2:13):

Պատրաստեց Սմավել սրկ. Պապիկյանը

Կրակի առեղծվածը

Տյառնընդառաջի տոնի հետ կապված մի շարք ժողովրդական ակնառու սովորույթներ կան (խարույկի վրայով ցատկել, շուրջը պտտվել և այլն): Հին հեթանոսական Հայաստանում տարվա այս ժամանակահատվածում նույնպես անցկացվում էին մի շարք արարողություններ՝ կապված արդեն կրակի պաշտամունքի հետ: Մեր օրերում շատերը, առանց իրերի խորքը թափանցելու, հայտարարում են, որ Տյառնընդառաջի ժողովրդական սովորույթները նույն հեթանոսական շրջանի տոնական արարողություններն են՝ պայմանավորված կրակի պաշտամունքով: Ուրեմն՝ ի՞նչ քրիստոնեական Հայաստանում կրակ ենք պաշտում: Քա՛վ լիցի: Իհարկե ոչ:

Չենք ժխտում, որ կրակի հետ կատարվող գործողությունների առումով նմանություններ կան: Բայց չէ՞ որ դրանք տարբեր են իրենց գաղափարական մասով: Յուրաքանչյուր արարք և առավել ևս ծես ու արարողություն ընդգծվում է իր գաղափարական կողմով և դրանով իսկ իմաստալից դառնում: Հեթանոսական ծեսի պարագային գաղափարական մասը առնչվում է «սրբազան» կրակի հետ, որը, փաստորեն, գերակա դիրքում է մարդկաց նկատմամբ, քանի որ ակնկալիքները դրա հետ են կապված: Ակնկալվում է, որ հենց կրակը պիտի ներգործի և երիտասարդ նորապսակներին երեխաներ պարզևի, տարին պտղաբեր դարձնի, հիվանդություններ բժշկի և այլն: Իսկ սովորույթի քրիստոնեական համատեքստում կրակը ստորադաս դիրքում է: Այն առավելաբար տոնի զվարճանքի մասն է ապահովում: Մենք կարծես «խաղում ենք» նրա հետ: Իսկ այդ «սրբազան» հորջորջվող կրակի նկատմամբ անհարգալից վերաբերմունք է: Քրիստոնեական սովորույթի մեջ ակնկալիքները կապվում են Աստծո հետ: Զավեշտալի է անգամ պատկերացնելը, որ մեր օրերում մարդ կարող է հավատալ, որ կրակը ինչ-որ գորավոր բան է պարունակում կամ ինչ-որ բան է տալիս: Աստված է օրհնում և դարմանում իրեն հուսացողներին ու հավատացողներին: Նա է մեզ բժշկում, առատ բերք և առողջ զավակներ պարգևում: Նշենք, որ խարույկը վառում են փետրվարի 13-ին՝ երեկոյան ժամերգության ավարտին կատարվող նախատոնակից հետո, երբ հանդիսավոր կերպով մտնում ենք Տյառնընդառաջի խորհրդի մեջ: Հատկանշական է, որ առաջին կրակը համայնքների եկեղեցու բակում է վառվում և ապա նոր՝ տների բակերում:

Ավանդաբար այս և մի քանի այլ սովորույթների քրիստոնեականացումը վերապահվում է Գրիգոր Լուսավորչին: Հենց այստեղ էլ երևան է գալիս նրա մտքի հանճարը, քանի որ մեծիմաստ խոհեմությամբ Հայրապետը կարողացավ այդ սովորույթներից մաքրել հեթանոսական խոտելի տարրերը՝ թողնելով միայն ազգայինը և այսպիսով դրանք կիրառել ի նպաստ քրիստոնեության: Պետք չէ մտածել, թե այդ սովորույթները պահելով՝ շարունակում ենք հեթանոսական պաշտամունքը: Կարևորն այն է, թե ինչ նշանակություն ենք հաղորդում այդ ամենին: Այս առիթով Պողոս առաքյալը հետաքրքիր դատողություններ է անում: Պատասխանելով այն հարցին, թե կուռքերին՝ զոհաբերված միս կարելի՞ է ուտել, թե ոչ՝ նա կարևորում է խղճմտանքի դերը, այսինքն, թե որպես ինչ ենք դա ընդունում: Եթե կուռքին զոհաբերված միսն ուտենք որպես այդպիսին՝ պղծվում ենք: Մակայն եթե դա որպես սովորական միս ընդունենք, ոչ իբրև զոհ կուռքերին, ազատորեն կարող ենք ուտել (հմմտ. Ա Կորնթ Ը, Թ 23-33): Այս գաղափարը իշխում է մեր օրերում էլ. ընդունելի է, եթե մենք Տյառնընդառաջի խարույկին վերաբերվենք ոչ որպես հեթանոսական մի երևույթի, այլ որպես սովորական մի խարույկի, որը վառվում է քրիստոնեական տոնի շրջանակներում:

Պատրաստեց Օերուն սրկ. Ներսիսյանը

Երիտասարդությունը
մարտահրավեր
ընդունելու
քաջությունն է, այլ ոչ
թե դրանից խույս
տալը



Խարույկի կրակը բորբոքելիս հայցում ենք աստվածային սիրո հուրը: Ինչպես Տիրոջը՝ Տաճարին ընծայելու ժամանակ ժողովուրդը ջահերով և կանթեղներով էլավ ընդառաջ, նույն օրինակով և մենք կրակ ու ջահ ենք վառում և Տիրոջ գալստյան նախատոնակը կատարում: Հեթանոսները Աստծո պատիվը կրակին էին մատուցում, իսկ մենք կրակը՝ որպես Քրիստոսի ծառա, բերում ենք նրան ծառայեցնելու:

Եռամեծար սր. Գրիգոր
Տաթևացի

ՍՈՒՐԲ ՄԱՐԳԻՍ ԶՈՐԱՎԱՐԻ, ՆՐԱ ՈՐԴՈՒ՝ ՄԱՐՏԻՐՈՍԻ,
ԵՎ 14 ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՎԱՐՔԸ

Հաղթող սպառազեն և քաջ նահատակ սբ. Սարգսի մասին վկայություններ են պահպանվել Փավստոս Բուզանդի, Մովսես Կաղանկատվացու, Մատթեոս Ուռհայեցու, Կիրակոս Գանձակեցու մոտ: Եղել են նաև օտար աղբյուրներ: Բայց միայն 1158թ. սբ. Ներսես Շնորհալիին է կարողանում իր եղբոր՝ Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի խնդրանքով Մար Պարսումայի ասորական վանքում գտնել սբ. Սարգսի և նրա որդու ամբողջական վկայաբանությունը, թարգմանել, մշակել, խմբագրել և սերունդներին հանձնել երկնային ու հողեր մի գանձ՝ «Վկայաբանություն Սրբոյն Սարգսի Զօրավարի եւ որդոյ նորա, որոյ անուն կոչի Մարտիրոս», որպեսզի ցրվեն նահատակի մասին եղած տարակարծությունները և հայ ժողովուրդը չմոռանա երազահաս սրբի բարեխոսությանը դիմել:

Ծագումով հույն և հռոմեական քաղաքացի սբ. Սարգիսը հունաց Կոստանդիանոս Բարեպաշտ թագավորի օրոք Կապադովկիայի հունական գործերի հրամանատարն էր՝ հռչակված ոչ միայն իր ռազմական արվեստով, այլև բարեպաշտությամբ:



Նա ավերում էր բազիլիկները, խորտակում մեհյանների դիվաձույլ պատկերները, եկեղեցիներ էր կառուցում և «ծագեր իբրեւ գասող լուսապայծառ յաշխարհին Կապադովկեցոց»:

Մակայն Կոստանդիանոս Մեծից և նրա որդիներից հետո գահ է բարձրանում Հուլիանոս Ուրացողը և հալածում քրիստոնյաներին: Այդժամ Քրիստոս երևում է հավատավոր զորավարին և հորդորում Աբրահամ նահապետի նման թողնել իր երկիրը (տե՛ս Ծննդ. ԺԲ), գնալ Հայաստան: Այստեղ գահակալում էր Տրդատ Մեծի թոռ Տիրանը, ով իշխանական պատիվները թողած և իր ունեցվածքը աղքատներին բաժանած Սարգսին մեծ պատվով է ընդունում: Իսկ Հուլիանոսը ոգևորվում է մի գուշակությունից, որի

համաձայն ինքն աշխարհի տերը պետք է լինի և արշավում է դեպի Պարսկաստան՝ ճանապարհին նահատակելով բազում քրիստոնյաների: Հայոց արքան հասկանում է, որ կայսրը հասնելու է Հայաստան և ի թիվս այլ քրիստոնյաների պահանջելու է նաև Սարգսի արյունը, ուստի խորհուրդ է տալիս Սարգսին գնալ Պարսկաստան:

Պարսից արքա Շապուհը ևս ուրախությամբ ընդունեց քաջ զորավարին, վստահեց իր գործի մի մասը, զորապետ նշանակեց պարսկահռոմեական սահմաններում: Աստծո գործությամբ առավել հզորացած քաջ զորապետը կարողացավ հաղթել ուրացող կայսեր զորքերին՝ զուգահեռաբար Քրիստոսի Հայտնության, Խաչելության և հրաշափառ Հարության մասին քարոզելով: Այս խոսքերը լսեցին զինվորները և «բազումք ի նոցանէ հաւատացին ի Տէր եւ մկրտեցան ի քահանայից անտի, որք ընդ սրբոյն»:

Կային նաև այնպիսիք, ովքեր չընդունեցին Քրիստոսին, մնացին խավարի մեջ և Շապուհի մոտ չարախոսեցին, թե Սարգիսը ապստամբել է չաստվածների դեմ: Խորամանկ Շապուհն իրենց կրոնական պաշտամունքի օրը հրավիրում է նաև զորավարին և նրա որդուն: Երանելի Սարգիսը գովեստներին պատասխանում է, թե հաղթել է միայն Քրիստոս Աստծո գործությամբ, իսկ զոհ մատուցելու առաջարկը մերժում է, արհամարհում կուռքերին: Մա տեսնելով մոզերը սպանում են Մարտիրոսին, իսկ արքան հորդորում է զորավարին չհակառակվել, քանզի որդուն կորցնելուց հետո ինքն էլ կչարչարվի ու իր կյանքը կկորցնի: Երանելի Սարգիսը բանտ է նետվում, բայց մխիթարվում է Քրիստոսի և հրեշտակների հայտնությամբ, աղոթում է, զորանում: Իսկ հաջորդ օրը (361թ. հունվարի 31-ին) նրան գլխատում են Մալք կոչված վայրում: Քրիստոնյա 14 զինվորներ փորձում են պատել նահատակի մարմինը՝ «մաքուր զգեստիք» և պատվով թաղել, բայց նրանք էլ արժանի են դառնում նահատակության պսակին: Այնուամենայնիվ՝ քրիստոնյաներին հաջողվում է նահատակ սբ. Սարգսի մարմինը փախցնել Ասորիք, որտեղից էլ նշխարները սբ. Մեսրոբ Մաշտոցի ձեռքով բերվում են Հայաստան, ամփոփվում Վան նահանգի Կարբ ավանում:

Պատրաստեց Թովմաս դպիր Առաքելյանը

Տյառնընդառաջ՝ Տօն Քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի ի Տաճարն

Տյառնընդառաջի տոնը Եկեղեցին համարում է տերունական տոն, որովհետև այն քառասուն օրական Հիսուսին տաճար բերելու հիշատակությունն է: Բոլոր հին ժողովուրդները հասկացել են, որ կյանքը հրաշք է և շատ խորհրդավոր: Հատկապես նոր ծնունդները կամ նոր հունձքը նրանց մեջ միշտ հիացումի, երկյուղի և պաշտամունքի զգացումներ են արթնացրել: Հին Կտակարանի օրենքի համաձայն՝ ողջ կյանքը պատկանում էր Աստծուն: Աստված նաև օրենք էր դրել, որ ամեն ինչի առաջինն Իրենն է, ուստի, երբ անդրանիկ էր ծնվում, կատարվում էր հատուկ արարողություն: Դա հատկապես այն բանի համար էր, որ մարդիկ մշտապես հիշեն, որ Աստված գործում է, որ արարչությունը շարունակվում է ամեն մի նոր ծնունդով: Այս ամենը խորհրդանշաբար դրված էր միայն անդրանիկների համար: Նրանց համար տաճարում պետք է գոհ մատուցվեր, պետք է գնային և ասեին, որ այս մանուկը պատկանում է Աստծուն: Քահանան ինչ-որ իմաստով այդ մանկանը վերցնում, ընծայում էր Աստծուն, իսկ նրա ծնողները՝ մեկ տարեկան գառ և մի զույգ աղավնի կամ տատրակ, որպեսզի ետ վերցնեին մանկանը:

Այստեղ միտքը շատ հստակ է. մենք կյանքին պետք է հարգանքով մոտենանք, ընդունենք, որ դա Աստծո մեծագույն նվերներից է և միշտ Աստծո հանդեպ երախտագիտության զգացումով լցված լինենք: Այսօր էլ այս գեղեցիկ ավանդությունը շարունակվում է Հայաստանյայց եկեղեցում. հայ մայրերն իրենց քառասուն օրական մանուկներին բերում են եկեղեցի, ուր քահանան երեխային ընծայում է Աստծուն, օրհնության աղոթք է կարդում և խնդրում, որ Աստծո ամենագոր աջը միշտ պահպանի մանկանը:

Այնպես էր ստացվել, որ Հիսուս իր կյանքի վերջին երեք տարիներին պետք է հայտնվեր մարդկանց, բայց երբ հայտնվեր, ողջ մարդկությունը պետք է իմանար նրա մեծության մասին, և բնական է, որ այդ ժամանակ մարդկանց հետաքրքրելու էր, թե ինչպես է Նա ծնվել: Դրա համար Աստված տնօրինեց, որ որոշ վկաներ գտնվեն Հիսուսի ծննդյան պահին՝ հավատացյալ հովիվները, գիտուն մոզերը և այժմ՝ մարգարեական հոգով օժտված ծերունիները: Այս բոլորն ինչ-որ իմաստով նաև Մարիամի համար էր, որովհետև նա պետք է վկա լիներ մեր հետաքրքրությունը հազեցնելու համար (այս ամենը Մարիամն է պատմել առաքյալներին և այդպես է գրի առնվել): Մյուս կողմից, համաձայն հրեական Օրենքի, ճշմարտությունը երկու վկաներով պետք է հաստատվեր: Եվ այստեղ տեսնում ենք, որ երբ տաճար են մտնում, այնտեղ երկու վկաներ հայտնում են, որ այս մանուկը իրենց պապած Մեսիան, փրկիչն է: Այդ երկու վկաներից մեկը Միմեոն ծերունին էր, մյուսը՝ Աննա մարգարեուհին: Այս հանդիպումը շատ խորհրդավոր է, քանի որ Աստծո և մարդու հանդիպումն է: Հետաքրքիրն այն է, որ Աստծուն բերում են մարդու մոտ ոչ թե հրեշտակները, այլ հենց մարդիկ: Եվ մինչ այժմ էլ այն ճանապարհը, որ տանում է երկինք, մեզ ցույց են տալիս ոչ թե հրեշտակները կամ աստվածային տեսիլքները, այլ մարդիկ, հասարակ մարդիկ, ում խոսքերում և ավետարանական պատմվածքներում մեր սիրտը ճանաչում է ճշմարտությունը: Եվ երբ մենք գնում ենք դեպի այդ ճշմարտությունը, հասկանում ենք, որ երկնային Ավետարանի՝ մարդկանց միջոցով փոխանցումը պատահական չէ: Պարզվում է, որ առանց մարդկանց, առանց Եկեղեցու, առանց մարդկանց հետ հաղորդության մենք ընդհանրապես չենք կարող գնալ դեպի Աստված: Միմեոն ծերունին նաև սրանով է տպավորիչ. ըստ ավանդության՝ երբ նա երբայերենից հունարեն էր թարգմանում Հին Կտակարանը, Եսայու գրքում հանդիպում է «Ահա կույսը պիտի հղիանա և որդի ծնի» (Եսայի Է 14) նախադասությանը և, տարակուսելով, որ ոչ ոք չի հավատա, որոշում է խմբագրել այն: Նա «կույս» բառի փոխարեն գրում է «կինը»: Սակայն մի պահ նիրհելուց հետո արթնանում և տեսնում է, որ նախկին տողերը վերականգնված են, այն էլ՝ ոսկե տառերով: Այսպես՝ Միմեոնը փառք է տալիս Աստծուն և, հասկանալով, որ Աստված այդպես է տնօրինել մարդկության փրկությունը, ցանկանում է իր աչքով տեսնել դա, ինչը և շնորհվում է նրան Սուրբ Հոգու կողմից: Միմեոնը տպավորիչ է այն իմաստով, որ նա ծերացած է, ունի մարգարեական հոգի, սուրբ է, և ինչ-որ իմաստով փրկված է, բայց իր հոգում անհանգստություն կա. ինքը գոհ չէ միայն իր փրկված լինելով, երբ տեսնում է իր ժողովրդին մոլորված, իսկ հեթանոսներին՝ խավարի մեջ կորած: Անհանգիստ է, թե այդ դարերով խոստացված Մեսիան է՞րբ պետք է ծնվի: Սա նաև օրինակ է մեզ, որ միայն մեր փրկությունը չպետք է բավարար լինի մեզ համար: Աստված միայն մեր անձնական փրկությամբ չէ, որ հետաքրքրված է, այլ Աստված ուզում է ողջ աշխարհը փրկել:

Փետրվարի 14-ը Տյառնընդառաջ է: Այսինքն՝ տարվա մեջ ևս մեկ օր Եկեղեցին հիշում է, որ Տերը եկել է, և մենք պետք է Նրան ընառաջ դուրս գանք: Տոնը հայտնի է նաև «Տրնդեզ» անվանումով, որը «Տերն ընդ ձեզ» արտահայտության փոփոխված ձևն է: Սա նշանակում է, որ Աստված մարդկանց մեջ և մարդկանց հետ է, և մարդիկ Աստծո գալուստով ոչ թե հեռացան միմյանցից, այլ մոտեցան միմյանց: Եվ քրիստոնեության ողջ բարոյագիտությունը այն է, որ չկորցնենք Աստծո և մարդկանց հետ Եկեղեցում գտած մերձավորությունը և հաղորդությունը: Գարեգին Բ վեհափառ հայրապետի տնօրինությամբ Տյառնընդառաջի տոնի օրը հռչակվել է նաև Նորապսակների օրհնության օր:

Պատրաստեց Հովհաննես սրկ. Բալայանը

Ճշմարիտ սերը

360 թ., Կեսարիա: Քաղաքի կենտրոնական թաղամասերից մեկում ապրող Վալենտինան այսօր ժամանակից վաղ էր արթնացել ու սովորության համաձայն ծնկի եկել, աղոթել Տիրամոր պատկերի առջև: Արտասովոր սպասում կար սրտում: Մոտավուտ պատերազմի մասին լուրեր էր լսել, որոնք կայծակի արագությամբ տարածվում էին քաղաքում: Դրում իրարանցում էր. փողոցների փոշին չէր հասցնում հանգստություն գտնել քաղաքային եռուզեռը ճեղքող հռոմեացի զինվորների կանոնավոր երթից: Նրանք շտապում էին դիմավորելու իրենց նոր առաջնորդին, որին այնքան էլ մեծ խանդավառությամբ չէին սպասում. պատերազմական ժամանակներում ռազմական ղեկավարի փոխտեղակալները սովորական երևույթ էր Հռոմեական կայսրության մեջ, ինչը սակայն հարուցում էր զինվորների և լեգեոնականների դժգոհությունը:

Վալենտինան աննկատ դուրս եկավ տնից ու սկսեց քայլել դեպի քաղաքի ծայրամաս տանող ճանապարհով: Նույն ժամանակ հռոմեացի զինվորները հասան քաղաքի հրապարակին: Հրամանատարության հանձման ժամանակ բանակի առջևից գնում էր նոր առաջնորդը՝ շրջապատված սպառազեն անձանց զենք ու զրահի ողջ ճոխությամբ: Սակայն, զինվորներն ու հավաքված ամբոխը, տեսնելով սպիտակ մի ձիավորի, անակնկալի եկան: Նրան ոչ ոք չէր ուղեկցում, բացի միայն կայսերական հրովարտակն ընթերցող մունետիկից: Վալենտինան հասավ այն խրճիթին, որտեղ մշտապես հանդիպում էր նրան, սակայն նա դեռ չէր երևում: Սկսեց անհանգստանալ. միշտ ինքն էր ուշանում. ծնողներն արգելում էին միայնակ տանից դուրս գալ և ստիպված էր լինում դա գաղտնի անել, սակայն այս անգամ ճիշտ հակառակն էր: Բռպեններն անցնում էին. տղան չկար ու չկար: Վատ կանխագագումը պաշարեց նրան. «Չլինի՞ նա արդեն մեկնել է պատերազմ. բայց առանց իրեն հրաժեշտ տալու չէր գնա, հաստատ չէր գնա», - մտածեց նա: Հետդարձի ճանապարհին նա տեսավ հռոմեական շարասյունը, որ պատրաստվում էր ճանապարհ ընկնել դեպի Պարսկաստան. պարսից Հուլիանոս արքան նախահարձակ էր եղել և անխնա կոտորում էր քաղաքների ու գյուղերի քրիստոնյա բնակչությանը: Լեգեոնականների խիտ շարքերում հանկարծ նկատեց իր սիրելիի դեմքը, նրա գանգուր վարսերը դուրս էին եկել սաղավարտի պողպատյա զրահից: Մի քանի վայրկյան Վալենտինան մնաց քարացած. չէր կարողանում շունչ քաշել: Այդ պահին երիտասարդը, նկատելով նրան, դուրս եկավ շարքից:

-Վալենտինա, ինչ էս անում այստեղ, - ձայն տվեց նա:

Վալենտինան թաց աչքերով նրան էր նայում:

-Դու պատերազմ ես գնում առանց ինձ հրաժեշտ տալու, - աղիողորմ հարցրեց աղջիկը:

-Ես չեմ կարող չգնալ, հասկացիր ինձ, քրիստոնյաները վտանգի մեջ են: Տղան մոտեցավ ու համբուրեց Վալենտինայի արտասովախառն այտը: Այդ պահին, հեռվում, գլխի ընկնելով, թե ինչ է կատարվում, ձին վարգեց և նրանց մոտեցավ հրամանատարը: Երիտասարդը մի պահ այլայլվեց:

-Քրիստոնյա ե՞ս, - ձայնեց հրամանատարը Վալենտինային: Աղջնակը գլխով համաձայնության նշան արեց:

-Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար, գնացի՛նք, զինվոր, - սասց հրամանատարը՝ սիրալիք հայացք նետելով Վալենտինայի արտասովախառն աչքերին: Լեգեոնը վաղուց չէր երևում, սակայն աղջնակը դեռ կանգնած էր տեղում: Հրամանատարի խոսքերը նրա սրտին էին դիպչել:

364 թ., Համիան: Քաղաքի լքված գերեզմանատան մեջ կանգնած էր մի օրիորդ՝ ձեռքին թարմ ծաղիկներ:

Նա անշարժ կանգնած էր տապանաքարերի առջև և կիսաձայն կարդում էր գրությունները. Մերգիոս-

Մարգիս՝ ծառա Քրիստոսի, Մարտիրոս և ...: Նրա ձայնը կտրվեց մի պահ, թվաց, թե սիրտն արդեն կանգ է առել: Սկսեց աղիողորմ արտասվել, ապա կռացավ, ձեռքի թարմ ծաղիկները դրեց տապանաքարին: Ավելի մեծ սեր ոչ ոք չունի քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար:

Պատրաստեց Իշխան սրկ. Քամայանը

Ֆեյսբուքում մեզ կարող եք հետևել այստեղ՝

www.facebook.com/gevorgianseminary

Ձեր հարցերը կարող եք ուղղել մեզ հետևյալ էլ. հասցեով՝

gevorgianseminary@gmail.com

Հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գևորգյան հոգևոր ճեմարան

Հեռախոս՝ (010) 510 180

